լուածք Իշխանաց Վրաց և Հայոց։ Բանչրուպ գիւղ 'ի ստորոտս Գաչն-ը լերանց (5) 'ի բարեբոյս հովտի, յորում են աւերակք եկեղեցեաց և քարանձաւք։

54. Ի հարաւոյ Արտահանայ, յարևելից Փէնէքայ և 'ի մտից գաւառին Ղարսայ կայ ԿԵՕԼԼ կամ ՔԷՕԼԷ վիճակ, որ է ԿՈՂ գաւառ Տայոց, յորում բղխեալ մեծ գետն Կուր, ինչպէս ընդ հիւսիս յԱրտահան և երթայ ընդ արևելս յԱխալցխէ գաւառ և խաղայ 'ի Վիրս։ Են 'ի վիճակին 40 գեօղք, որոց գլխաւոր՝ աւանն Ո-ր-ս-ի, առ միով 'ի վտակաց գետոյն, 'ի բարձու 6500' կամ աւելի։ Ձմեռն կողմանցս երկարատև է, բայց են նոցին և ջերմ հովիտք՝ ուր ամառն զուարճալի յոյժ, վասն որոյ և Վաղարշակ հայր Արշակունեաց՝ յարդարեաց 'ի սմա իւր ամարանոցս և պարտէզս և որսարանս։ — Ընդ մէջ Կողայ և Արտահանայ յարևմտից, և գաւառին Ղարսայ յարևելից կայ փոքր վիճակն ՁՈՒԽՈՒՐԻԹ ըստ Վրաց լեզուի հաւեալ, որք և Ֆ-ս-ոյ կոչին 'ի հայկականէս առեալ՝ Փ-ս, յորմէ և Թուրքք, և այս սակս գոգաձև լինելոյ երկրին. ընդ որ խաղայ վտակ համանուն 'ի հարաւոյ Ձըլարը լերանց իջեալ և անկանի 'ի Կուր, 'ի նոյն և առուակ մի եկեալ 'ի Թէն-կէօլ (18) լճակէն յարևելս հիւսիսոյ վիճակին։

55. ԲԱՍԵՆ վիճակ կայ յարևելից Էրզրում, և ընդ մէջ Նառիմանայ և Փէնէքայ 'ի հիւսիսոյ, անջրպետեալ Քիրէճ-ը և Աւմէրէ լերամբք, և յելից Սօղանլու լերամբք բաժանեալ 'ի Ղարսայ գաւառէն, 'ի հարաւոյ՝ Քէօսէ տաղ և Շահ-եօլ լերամբք 'ի Պայէզիտայ գաւառէ, յորոց վտակս օժանդակս յոլովս ընդունի Երասխ գետ եկեալ յարևմտից և 'ի հարաւոյ 'ի Թէքմանայ, Բասէնայ-ը-ը կոչեալով 'ի վիճակիս, և երթայ 'ի Կաղզուան. պարսպեալ 'ի լերանց բարձրահովիտ դաշտ է վիճակս 5000' բարձր, և կարի ընդարձակ, իբր 16 ժամուց ընդ երկայն և 10 ընդ լայն. 'ի հնումն կոչէր սա ՍՏՈՐԻՆ ԲԱՍԵՆ, մասամբ Վերնոյն որ և ԱՆՓԱՑՏ ԲԱՍԵՆ, որ կոչեցաւն յետոյ ՎԱՆԱՆԴ և այժմ վիճակ Ղարսայ. բայց և այժմեանս Բասէն բաժանի 'ի Վերին և 'ի Ստորին, յետինս սահմանակից է Ղարսայ, միւսն՝ Էրզրումայ. և են նոցա գեօղք իբրև 150։ Գլխաւոր տեղի համարէն վիճակին է ՀԱՍԱՆԳԱԼԱ կամ Հասանգալէ քաղաք, յահեկէ համանուն ջրոյն՝ որ է առաջք մի Երասխայ և 'ի հնումն կոչէր Մ-ր-ը կամ Մ-ր-ը-ոմ-ը. վեց ժամաւ յարևելից Էրզրումայ, 'ի ստորոտս լերին, բարձր 5150', ունի բերդ ամուր և կրենապարիսպ։ Սակաւ ինչ հեռի են երեք ջերմուկք և բաղանիք հին, և կամուրջ մի։ Բնակիչք 5000. իսկ Հայք գաղթեցան 'ի Ռուսս։ — Յարևելից լերինն կայ մենաստան Տիրամոր շինեալ 'ի Գրիգոր Մագիստրոսէ, յորում և գերեզման նորա։

56. Ժամուք հեռի յարևելից Հասանղալէի կայ Քէօփրի-էյ առ տեղեաւ ԱՂԱՐՇԱՒԱՆայ, զոր կառոյց Վաղարշ հաւ մեծին Տրդատայ, զի անդ ծնաւ. նշանաւոր այժմ 'ի նմա է մեծ կարաւանատուն քարաշէն, զոր Դէնուացոց ասեն շինեալ, բայց և 'ի նախնի շինուածոցն մարթ է մնացորդ կարծել։ Հուպ 'ի գեօղս՝ գետն Մուրց խառնի յԵրասխ, և 'ի վերայ խառնրոյն գոյն արկեալ է անուանի եօթնակամար կամուրջն Հովուի. Ջոպան-փէօփրի-ս-ի-, աւելի քան զ'700' յերկայնութիւն և 30' 'ի լայնութիւն, զորմէ բազում ինչ աւանդեն, այլ թուի Հայոց ձեռակերտ։ — Ի հիւսիսոյ Հասանղալէի կայ Հրճ-որ լեառն, և ընդ նովաւ գեօղք Ախա, Պապիճվան, և այլն. յարևմտից Ախայ Դ-ս գեօղք երկու, որք են Դ-ս և Ուրդ-ր-ս հին գեօղք անուանիք և աթոռ եպիսկոպոսացն Բասենու և Որդունեաց նահապետի։ — Ի հարաւոյ Մուրցայ և Երասխայ կան Օ-ն-ի գիւղ անուանի, որ աւերեցաւ 'ի ԺԱ դարու. յելից նորա Եաղն 60 հայաբնակ տամբք, առ որով աւերակք հին շինուածոց։ — Ի հարաւոյ սորա յաջմէ Բասեն ջրոյ 'ի քարաբլրի կայ Ա-ն-ի բերդն կամ Օ-ն-ի, զարմանալի շինուած յանկոխ վայրի, աւերեալ 'ի Լենկթիմուրայ, կան ջրամբարք ցամաքք և սենեակք ինչ 'ի նմա, որ Ճի-ա-ն-գալէ կոչին, և յուխտ գնան անդր նանրահաւատք. բնակիչք գեղջն 60 տուն Հայք մահմեդացեալք։ — Յարևմտից հարաւոյ Աենկայ կան Պեյ-էրտ, Ձի-ւլի-, Ձիհիրլան գեօղք Հայոց քրդակրօնից, և հուպ 'ի նոսա 'ի լերինս ուրեք անձաւք ձեռագործք Քըրտ-էն-էրէ կոչեցեալ, այժմ դոմք անասնոց։ Յելից սոցա ցսահմանս գաւառին Ալաշկերտու՝ զոր անջրպետեալ Ճէ-ն-ան լեառն, կայ խոպան երկիր Գ-ր-ա-ը-ը կոչեցեալ։

Ի Ստորինն Բասեն գլխաւոր տեղիք են՝ Խորասան աւան 'ի ձախմէ Երասխայ, և Ջաբ-ս հուպ նմին. Ջերմակ առ Գ-ր-ա-ս-ս վտակաւ, յորոյ 'ի ծայրս՝ 'ի հարաւոյ Աքմեզրէ լերին կայ անուանի բերդն Քէօր-օղլու-գիւցաղլն, զոր երգեն վիպասանք կոզմանցն։ — ՄԱՆԿԵՐՏ կամ Մ-ն-ա-ղ-էր-ա Երբեմն քաղաք եպիսկոպոսանիստ, յարևելից հիւսիսոյ Խորասանայ։ — Ի հարաւոյ Երասխայ ընդ մէջ սահմանաց Ալաշկերտու՝ գեօղք Ամրոփոմ, Գ-ն-ա-ի-ր, Եի-ղ-էրէն, Տելիպապա, Սարդրան, և այլն։

57. Ի հարաւոյ Կարնոյ և Դերջանայ, յելից Կեղոյ և 'ի հիւսիսոյ Կէյանիկ վիճակի Մշոյ կամ Պինկէօլ լերանց՝ կան երկու փոքր լեռնային վիճակքն ԱՐԻՆՁ և ԼԷՋԿԻ, մասունք Մանանաղոյ։ — Իսկ 'ի մտից նոցա և 'ի հարաւոյ Դերջանայ, յելից Տուժիկ լերանց և 'ի հիւսիսոյ Ճապաղջուր վիճակի և Մշոյ, կայ ԿԵՂԻ վիճակ որ և ՔԵՕՐԻ, բաժանեալ 'ի Վերին և 'ի Ստորին, և ունի զխորձեան գաւառ Դ Հայոց և զԿՈՐԻ Տուրուբերանոյ, համակ լեռնային ոստովք Պինկէօլ լերանց, որպիսիք են Սբ-ր-ա-Ռ, Քէօշէր, և այլն։ Ստորին Կեղոյ որ 'ի հիւսիսոյ կայ՝ գլխաւոր տեղի է Մէլիֆան. վերնոյն որ 'ի հարաւոյ՝ Թէմրան կամ Կեղի առ Լէլիկ ջրով (Գայլ գ-ս 'ի հնումն)։ — Յարևմտից Կեղոյ, 'ի հիւսիսոյ կուսակալութեան Խարբերդու, և 'ի հարաւոյ Եփրատ գետոյ (Գարասու) կամ գաւառացն Դերջանայ և Եկեղեաց՝ կան լեռնավայր վիճակքն ՏՈՒԺԻԿ և ՄՆՁՈՒՐ, 'ի հնումն ՄՆՁՈՒՐ գաւառի Բարձր Հայոց, բնակեալք յազատաբարոյ Քրդաց, վասն որոյ և անմատոյցք յուղղութեան և անծանօթք. թէպէտ և փոքր մի նուաճեցան Քուրդք ընդ Օսմանեան պետութեամբ, այլ տակաւին բովանդակ երկիրն որ 'ի միջի կրկին բազկաց Եփրատայ ցկցուած նոցին և Միւս-Գայլ գետոյ (23)